եղբայրների հետ։ Ինչո՞ւ, որովհետև Ս. Գրիգոր իւր հոգևոր ազդեցութեամբ իշխում է քրիստոնեայ Հայոց պատմութեան բոլոր դարերի վերայ։ Դեռ ԺԳ. դարում Յովհան Երզնկացին կենդանի ոգևորութեամբ շեշտում է շարունակ Ս. Լուսաւորչի այդ միացուցիչ նշանակութեան մասին։ Մի է, ասում է նա, Հայրն մեր, մի և միակրօն ազգն Հայոց։ Հայաստանեայց Եկեղեցուն ուղղելով իւր խօսքը, «ի հատէ հասկ վերաբուսար։ ի հասկէ շեղջ յօրինեցար, ասում է, և ի միոյ շառաւիղէ տնկեալ որթ արմատացար։ յոգնակի ուռովք աճեցեալ և տարածեալ լցեր զտեղիս ի ծովէ մինչև ի ծով։ ի միոյ հովուէ մեծ հօտ եղեր հովուապետին մեծի։» Այս միութեան գիտակցութիւնն այնքան որոշ է, որ Երզնկացուն շատ զարմանալի է երևում որ և է բաժանումն Հայոց մէջ։ Նա իրաւացի կերպով ողբում է այն առիթների վերայ, որոնք խանգարում են այդ միապաղաղ սերտ հաղորդակցութեանը մինևոյն հոգևոր ծնողի զաւակների մէջ. «Ի միոյ ծնողէ բազմութիւն անթիւ զաւակաց ծնան, ասում է, և այժմ ի բազմութեանց հարանց ոչ զոք ծնանեն և ծնելոցն ոչ ոք դաստիարակէ զնուազդ օրինացն։ Բաժանման և վարատման նպաստողներին աչքի առաջ ունենալով։ «Ի բազում հովուաց ցրուեալ ճապաղեցար, ասում է, մոլորականք և թափառեալք ի լերինս, գազանաբեկք և